

Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Միջին մասնագիտական կրթության 0728.09.5 «Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)» մասնագիտության 0728.09.01.5 «տեխնիկ-փորձագետ՝ արտադրանքի ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման» որակավորման
---------------------------------------	---

I. Դերը	Արտադրանքի որակի ենթակառուցվածքի տեխնիկ-փորձագետը տարբեր կազմակերպություններում, ստանդարտացման և համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման) մարմիններում. - կատարում է հավատարմագրման համար պահանջվող փաստաթղթերի փաթեթի կազմման և ներկայացման գործավարություն, -անհրաժեշտ ստանդարտների տեխնիկական կանոնակարգերի, դասակարգիչների, ինչպես նաև այլ նորմատիվ և իրավական փաստաթղթերի ձեռք բերում, փաթեթի ստեղծում և վարում, -կազմակերպության տարբեր ստորաբաժանումներին, աշխատանքային տեղամասերին անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերով ապահովում և տեղեկացում դրանց փոփոխությունների մասին և իրեն տրված իրավասությունների շրջանակներում կարող է հետևել դրանց կիրառման գործընթացին:
----------------	---

II. Խնդիրների բնագավառները

Խնդիրների բնագավառ 1. Որակի ենթակառուցվածքի համար ապահովել նորմատիվ և իրավական փաստաթղթերը

Աշխատանքային գործընթացը	- ըստ օբյեկտների ձևավորել ստանդարտում կամ նույն նշանակության այլ նորմատիվ փաստաթղթում ներառվող հատկանիշների և բնութագրերի ցանկը, - օբյեկտի առանձնահատկությունը համապատասխան ընտրել անհրաժեշտ տեխնիկական կանոնակարգեր, - տեխնիկական կանոնակարգերին համապատասխան ձևավորել անհրաժեշտ նորմատիվ տվյալները, ստանդարտի կամ այլ նորմատիվ փաստաթղթի ձևաչափին համապատասխան ձևավորել նախագծային փաստաթուղթ:
--------------------------------	---

Կատարման չափանիշներ	- օբյեկտը բնութագրող անհրաժեշտ հատկանիշների ցանկի ձևավորում, - ըստ նախատեսվող շուկաների համապատասխան սահմանված
----------------------------	---

	<p>մոտեցումների բնութագրերը,</p> <ul style="list-style-type: none"> - գոյություն ունեցող կանոնակարգերից ընտրված են օբյեկտին համապատասխան և անհրաժեշտ բոլոր տվյալները, - նորմատիվ փաստաթղթի ձևաչափը ճիշտ ընտրված է, - նորմատիվ փաստաթուղթը ձևավորված է կարգերով սահմանված պայմաններին համապատասխան - ընդունված որոշումները, կատարված ձևակերպումները հիմնավորված են:
<p align="center">Խնդիրների բնագավառ 2. Ստուգել արտադրանքի և տեխնոլոգիական գործընթացների համապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերի պահանջներին</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> -առանձնացնել տեխնոլոգիական գործընթացի կարևոր փուլերը և ներկայացնել դրանց առանձնահատկությունները, -նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր, -ընտրել ստուգման անհրաժեշտ մեթոդը, -կատարել և ընտրել արտադրանքի նմուշառում, -պարզել օբյեկտի հատկանիշների համապատասխանությունը նորմատիվ փաստաթղթի պահանջներին, -պահպանել արտադրանքի չափագիտական պահանջները, -անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմում:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - առանձնացված են տեխնոլոգիական գործընթացի առանցքային և կարևոր փուլերը, - անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և բովանդակությունը ճիշտ է ձևավորված, - ստուգման մեթոդները ճիշտ են ընտրված , - ստուգման արտադրանքին համապատասխան նմուշառումը ճիշտ է ընտրված, - ստուգումը ճիշտ արդյունքներ է ապահովում, - պահպանված են չափագիտական պահանջները, - ստուգման արդյունքներով փաստաթղթերը ճիշտ են լրացված:
<p align="center">Խնդիրների բնագավառ 3. Աշխատատեղերն ապահովել անհրաժեշտ փաստաթղթերով, հետևել դրանց կիրառմանը</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - արտադրական գործընթացներին համապատասխան փաստաթղթերի կազմում, - հսկողություն աշխատողների հրահանգավորման գործընթացի ճշտության նկատմամբ,

	<ul style="list-style-type: none"> - հետևել փաստաթղթերի պահանջների կատարմանը, - կազմել անհրաժեշտ հաշվետվություններ:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - փաստաթղթերի կազմը և տեղամասերը ճիշտ է ընտրված, - փաստաթղթերը ճիշտ են կազմված և կիրառման առումով մատչելի են, - աշխատողների հրահանգավորումը կատարված է, - աշխատանքային գործընթացներում նվազել են ընդունված չափանիշներից շեղումները, - հաշվետվություններում ներկայացվում են էական եզրահանգումները:
Խնդիրների բնագավառ 4. Կազմել հաշվետվություններ, արձանագրություններ, հայտարարագրեր	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - ըստ սահմանված պարբերականության և ներկայացման վայրի հաշվետվությունների կազմում, - ըստ անհրաժեշտության արձանագրությունների կազմում,, - ըստ հանձնարարականի հայտարարագրերի կազմում, - փաստաթղթերի գրանցամատյանի վարում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - հաշվետվությունները կազմված են սահմանված ձևաչափով և ներառում են անհրաժեշտ տեղեկատվությունը, - արձանագրությունները ճիշտ են կազմված, - հայտարարագրերի առանձնահատկությանը համապատասխան դրանք ճիշտ են լրացված, - գրանցամատյանը ճիշտ է վարվում:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Որակի ենթակառուցվածքի տեխնիկ-փորձագետը պատասխանատու է իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման, նորմատիվ փաստաթղթերի ձեռք բերման և գործող փոփոխությունների ներառման և արդիականացման, տեխնոլոգիական գործընթացը անհրաժեշտ փաստաթղթերով ապահովելու, դրանց պահանջների կատարման նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու, որակի ենթակառուցվածքի օղակների նորմալ աշխատանքի, պահանջներին չհամապատասխանող արտադրանքը շուկայահանումը կանխելու, պահանջվող հաշվետվությունները և արձանագրությունները ժամանակին կազմելու, ղեկավարությանը անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու համար:</p>
IV. Լեզուները	<p>Հայոց լեզու – գերազանց Անգլիս օտար լեզու – բավարար</p>

	Երկրորդ օտար լեզու - բավարար
V. Համակարգիչը	MS Word, Excel - բավարար Internet՝ բավարար
VI. Գիտելիքները	Որակի ենթակառուցվածքի տեխնիկ-փորձագետը պետք է բավարար գիտելիքներ ունենա ստանդարտների համակարգերի, չափագիտության, համապատասխանության հավաստման, ըստ ապրանքախմբերի ապրանքագիտության, նյութերի հատկությունների, ըստ ճյուղերի արտադրության տեխնոլոգիայի, տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդների, բնագավառի գործունեության իրավական կարգավորման, գործավարության բնագավառներում:
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> - օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները մշակվող ստանդարտներում և այլ նորմատիվ փաստաթղթերում արտացոլելու կարողություն, - օբյեկտի հատկանիշներին համապատասխան դրանց ուսումնասիրման մեթոդներն ընտրելու կարողություն, - ուսումնասիրման արդյունքների ընդհանրացման և եզրակացություններ կատարելու հմտություն, - փաստաթղթեր ձևավորելու հմտություն, - տեխնոլոգիական գործընթացների հսկման սխեմաները ձևավորելու կարողություն, - օբյեկտի հատկանիշները ստուգելու համար օգտագործվող տեխնիկական միջոցները կիրառելու հմտություն,
VIII. Անձի որակական հատկանիշներ	Որակի ենթակառուցվածքի տեխնիկ-փորձագետը պետք է դրսևորի հետևյալ անձնային որակները. հաղորդակցվող, կարգապահ, ճշտապահ, նորույթներն ընկալող, դիտողունակ, համբերատար, հանդուրժող, ընկերասեր: